ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵՐԻՆ ԴՎԻՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКИЙ МАРЗ

АДМИНИСТРАЦИЯ СЕЛА В. ДВИНА

e – mail: verindvin@mail.ru
հեռ. 0235 6-26-86

N- 63/
13.12.2016թ.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ
Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Ձեզ Վերին Դվին համայնքի ավագանու 05.12.2016թ. կայացած թիվ 11,12,13,14,15 որոշումների կրկնօրինակները :

Առդիր 9 էջ:

Հարգանքներով
Վերին Դվին համայնքի ղեկավար՝ Լ. Պետրովա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 11-Ն

05.12..2016 թվական

ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի

Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով ավագանին որոշեց՝

Վարչական բյուջեի գործառնական դասակարգման 11.01.02.51 4891 հոդվածից պակասեցնել 1200 000 դրամ , որից 200 000 դրամը ուղղել վարչական բյուջեի 08.02.04.51 գորխառնական դասակարգման 4269 հոդվածին , 1000 000 դրամը ուղղել գործառնական դասակարգման 10.07.01.54 գործառնական դասակարգման 4729 հոդվածին:

Ավագանու անդամներ

1.Անյա Պետրովա-

2.Սոնիկ Թամրազյան –

3.Մարիյա Լազարևա –

4. Մարիաննա Բաղալովա-

5. Սերգեյ Միխայլով-

6.Արայիկ Աբրամով-

7. Իոսիֆ Լինկոն-

Համայնքի ղեկավար Լ.Պետրովա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

N-12

05.12.2016թ.

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ և ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16 –րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով ավագանին որոշեց.

Հաստատել գույքագրման հանձնաժողովի կատարած գույքագրման արդյունքները՝ համայնքի գ /պ , մշակույթի տան, գրադարանի գույքի հաշվառման գործում:

Ավագանու անդամներ

1.Անյա Պետրովա-

2.Սոնիկ Թամրազյան –

3.Մարիյա Լազարևա –

4. Մարիաննա Բաղալովա-

5. Սերգեյ Միխայլով-

6.Արտյիկ Աբրամով-

7. Իոսիֆ Դինխոն-

Համայնքի ղեկավար՝ Լ.Պետրովա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 13-Ն

05.12.2016թ.

2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ և ՀԱՍՏԱՏԵՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-ր և 11-րդ հոդվածներով ավագանին որոշեց .

Հաստատել Վերին Դվին համայնքում 2017թ. համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը:

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեզործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 100 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային

գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ.

6. Համայնքի տարածքում՝ առևտրի օբյեկտներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 25 000 դրամ.

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

ե) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

8.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով , 250 դրամ :

8.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան – 100 դրամ :

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 4000 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 դրամ:

Վերին Դվին համայնքի վարչական տարածքում 2016 թ-ի համար սահմանել հետևյալ վճարները:

ա / Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերձնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փողհա - տուցման վճար սահմանել 400 դրամ:

բ / ՏԻՄ-ի կողմից մրցույթներ կազմակերպելու հետ կապված մասնակիցներից մուտքավճար ՝ 1000 դրամ:

գ/ Սահմանել աղբահանության վճար յուրաքանչյուր բնակչից ամսեկան 0 դրամ:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1.Անյա Պետրովա-

2.Սոնիկ Թամրազյան –

3.Մարիյա Լազարևա –

4. Մարիաննա Բաղալովա-

5. Սերգեյ Միխայլով-

6.Արայիկ Աբրամով-

7. Իոսիֆ Դինխոն-

ՀԱՍԱՅԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Պետրովա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 14-Ն

05.12.2015 թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական Ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով ավագանին որոշեց .

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 240,0 հազար դրամ :

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1.Անյա Պետրովա-

2.Սոնիկ Թամրազյան –

3.Մարիյա Լազարևա –

4. Մարիաննա Բաղալովա-

5. Սերգեյ Միխայլով-

6.Արայիկ Աբրամով-

7. Իսրաֆիլ Դինխոև-

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Պետրովա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 15-Ն

05.12.2015 թ.

ՎԵՐԻՆ ԴՎԻՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ և ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏԱՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության ճրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի դրույթներով ավագանին որոշեց հաստատել գյուղապետի առաջարկած աշխատակազմի հետևյալ թվաքանակը, հաստիկացուցակը և նրանց պաշտոնային դրույքաչափերը:

1. Աշխատակազմի քարտուղար	-- 1 - 160,0 հազ. դրամ
2. Աշխատակազմի գլխավոր մասնագետ	-- 1 -- 155,0 հազ. դրամ
3. Աշխատակազմի առաջատար մասնագետ	-- 1 -- 150,0 հազ. դրամ
4.աշխատ. առաջին կարգի մասնագետ	-- 1 – 120,0 հազ. դրամ
5. օպերատոր	-- 1 – 90,0 հազ, դրամ
6.մշակույթի տան տնօրեն	-- 1 -- 80,0 հազ. դրամ
7. գրադարանավար	-- 1 – 80,0 հազ, դրամ
8.համույթի ղեկավար	-- 1 – 80.0 հազ. դրամ
9. պահակ	-- 1 – 80,0 հազ. դրամ
10. այգեպան	-- 1 -- 80,0 հազ. դրամ
11. հավաքարար	-- 1 – 80,0 հազ. դրամ
12. վարորդ	-- 1 – 80,0 հազ. դրամ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1.Անյա Պետրովա-

2.Սոնիկ Թամրազյան –

3.Մարիյա Լազարևա –

4. Մարիաննա Բադալովա-

5. Սերգեյ Միխայլով-

6.Արայիկ Աբրամով-

7. Իոսիֆ Դինխոև-

ՀԱՍԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Պետրովա